

նորա համար մի անողորմ դատաւոր չէ՛ որ նորա պղծութիւնների համապատասխան պատիժ տար և կորստեան մատնէր նորան, այլ մի բարեգութ հայր, որ սրբել և իրեն արժանի դարձնել է կամենում՝ ուստի վախենալ Աստրծուց չի նշանակում պատժից վախենալ, այլ պատկառել մի պաշտելի և յանձափս սիրելի էակից՝ աչքի առաջ ունենալ ամէն բոպէ մեր Երկնաւոր Հօր սրբութիւնը և ջանալ սուրբ լինել, որպէս զի չվշաացնենք Նորան և չըրկենք մեզ Նորա սիրուց և զթութիւնից:

Սրբութիւնը զօրութիւն է. որչափ սուրբ լինենք հոգւով ու մարմնով՝ նոյնչափ աւելի փտահոլութիւն կունենանք սուրբ Աստուծոյ վերայ, որ ամենայն զօրութեանց աղբիւրն է՝ նոյնչափ կպակասի մեր իսկական երկիւղի զգացումը: Դորա փոխարէն իւրաքանչիւր պղծութիւն հեռացնում է մեզ Աստրծուց և երկիւղալի ու անսպասով դարձնում մեր դրութիւնը: Սկզբում գուցէ շատ զգալի չէ մեզ այդ մեզ այնպէս է թուում թէ աներկիւղ ու անպատիժ կերպով կարող ենք թող տալ, որ մեր հոգին ու մարմինն զրօսնեն, ինչպէս իրենց ցանկութիւնները թելագրում են. բայց շուտ յետոյ ստիպուած պէտք է լինենք խոստովանել, որ մեր առաջը կորստեան անդունդ է և եթէ կանգ չառնենք ու ետ չդառնանք՝ աւելի ու աւելի արագ կըլորուինք, մինչև որ մի բոպէ կգայ, երբ ուշ կլինի այլևս կանգնելն ու դառնալը: Հոգին անտեսանելի է և մեր հոգեւոր պղծութեանց հետեանքները շատ անգամ մութ են մնում մեզ համար. սակայն նոյնչափ պարզ է և շօշափելի մարմնոյ պղծութեանց յառաջ բերած արդիւնքը. մարդիկ տեսնում են այն և զարհուրած հարցնում՝ ինչպէ՞ս եղաւ. մինչդեռ հարցի պատճառ չկայ: Եթէ ուրիշ փաստեր իսկ չլինէին, թէ մի արդարագատ բազուկ է կառավարում տիեզերքը և հատուցումն պահանջում մեր բոլոր գործերի համար՝ այս մէկը բաւական էր, բաւական էր այն զարհուրելի հետքերը դիտել, որ իւրաքանչիւր պղծութիւն թողնում է սերունդէ սերունդ մարդոց հոգու և մարմնի մէջ: Աստուծոյ արդարագատ բազուկից խոյս տալ ոչ մի տեղ մենք չենք կարող, բայց կարող

ենք Նորա գծած ճանապարհներով ընթանալ վախենալ Նորանից և Նորա սրբութեան օրէնքը գործ դնել, հակառակ դէպքում՝ մէծ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ:



„ՄԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՐՑ ԳԼԱՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ“

ԱՅս վերնագիրը կրող մի փոքրիկ դրքոյկ է ուղարկուած մեզ Կ. Պոլսից, որի հիդինակը՝ Ազարեան Պատրիարքին շրջապատող հայ—կաթոլիկ վարդապետներից մէկը, նպատակ է դրել ցոյց տալ թէ, մինչ «հանդարտ խաղաղ» և երջանիկ գոյութիւն ունենալու փափագով՝ վանայ ժողովուրդը Հռովմէական եկեղեցւոյ զիրկը վերադարձեր է (վերադարձնը), խիստ օրինաւոր և աստուածահաճոյ գործ է կատարել, Հայոց եկեղեցւոյ նախնի սրբազան հայրապետների շաւղով է գնացել: Այսպիսի զրուածքների* դէմ հերքում գրելը ապարդիւն աշխատանք կլինէր. յայտնի է կաթոլիկ եկեղեցականների փաստարանութեան եղանակը: Երբ Փրկիչը Պետրոս առաքեալին երեք անգամ «Արածե՛ւ զոչխարս (կամ զգառինս) խմ սասց՝ սա իւր երեք ուրացութիւնները յիշեց և արտմեց, հասկացաւ թէ որչափ ողորմած էր Տէրը դէպի ինքը, որ չնայած այն ամօթալի ուրացութեան՝ դարձեալ նախկին առաքելական կոչմանն էր հրաւիրում— և խղճահարութեան, երախտագիտութեան ու սիրոյ

* Ինչպիսի շրագրներից անկիսցանք, ևոյն ոգւով մի գիտք է հրատարակել Քրեանիսիցի Նշանաւոր Հայր Եարման, որ հայի կոտորածների ժամանակ մեծ արիւնքի համեց իրն, հայոց դասի ամենաեռանդուն պաշտպաններից մէկը: Ձեռք զարմանում, որ կարողիկ պատերը յանուն Քրիստոսի սկսած գործը վերջն ի շահ պատկան արոնի դարձրեց (չէ որ պատր Քրիստոսի փոխանորդն է ևորս համար), բայց շատ ցանցանք այս գրի մտախն շշանդիս ևնտեռայի մէջ գրած լինալատորեան ներոյ շ. Յ. Տ. ատերը՝ Միխրարեան հայրերի ամենամանակելի ևերկայացուցչի ստորագրութիւնը կարդալով, որ ևնդիւնակի պատճառարանութիւնը բոյլ գտնելով հակեղեմ՝ գովում է, կամ գուցէ աւելի ձիշ կլիներ ասել՝ ստիպուած է գովել ևպատկար:

բուն զգացումներով լեցուեցաւ. բայց կաթոլիկ վարդապետը՝ իրաւախոհ և ճշմարտախօս մարդու կատարեալ զիտակցութեամբ, ժպիտն երեսին և ձեռքը խղճի վերայ դրած՝ ձեզ կասէ. չէ՛, դորանով Քրիստոս իւր առաքեալներին Պետրոսի ոչխարները դարձրեց և իշխանութիւն տուաւ: որ նա անսխալ մնայ և միւսներին սխալուելիս ուղիղ ճանապարհ ցոյց ապյ: Բաց՝ առաջը զիր «Գաղատացոց» թուղթը և պարզիր, որ եթէ սխալուելու մի դէպք յիշուած է առաքեալների համար՝ այդանդ և սխալուողը դժբաղդարար կրկին Պետրոս առաքեալն է եղել: և Պօղոս ստիպուել է նորան յանդիմանել ու սխալն ուղղել: միւսնոյն է՝ քաջ վարդապետը Պետրոս առաքեալի «ստղտեալ» լինելն էլ նորա երեւակայական յաջորդ Հռոմի պապի անսխալականութեան համար փաստ կհամարէ և կպնդէ: որ եթէ Յովհաննէս աւետարանիչն անգամ այսօր կենդանի լինէր՝ էլի պապին պէտք է հնազանդէր և ճշմարիտ քրիստոնէութիւնը նորանից սովորէր: Չէ՛ որ Հայոց Յովհան Մանգակունի կաթոլիկսան ևս՝ Վահան Մամիկոնեանի մարզպանութիւն ընդունելու առթիւ կատարուած հանդիսի միջոցին, երբ «զուրացոցս ամէր առ արքայութեան դռնապանն և փակակալն Պետրոս» ասում էր, «ուրացող ազգայիններուն» ոչ թէ յորդորեց, որ ուրացող Պետրոսից զղջում սովորեն և յոյս ունենան այգպիտով կրկին արքայութիւն ժառանգելու: այլ «հրամայեց որ ի հռովմ երթալով Պետրոսէն, որ ան ատեն սուրբ Լեոն մեծ Քահանայապետն էր, իրենց արձակումն ընդունին»: Սեզ նման հասարակ մահկանացուների դատողութեամբ ի հարկ է Պետրոսը՝ Պետրոս է, Լեոնը՝ Լեոն, և Մանգակունին Պետրոս ասելով ոչ Լեոն կարող էր հասկանալ և ոչ էլ հայ ուրացողներին «Լեոն մեծ Քահանայապետի» մօտ ուղարկելու հնար ունէր, որովհետեւ այդ Լեոնը վախճանուել է 461 թ.-ին, մինչ Մանգակունու ծառը 485 թ.-ից յետոյ (գուցէ 3 — 4 տարի յետոյ) է խօսուել: բայց կաթոլիկ վարդապետի համար ի՛նչ կայ, նա պարտաւոր է բնական դատողութիւնն էր պատմական ճշմարտութիւններն էլ պապին հնազանդեցնել և կատարում է իւր պարտականութիւնը, կատակերգականն այն է միայն

որ նա երեւակայում է, թէ այսպիսի փաստերով կարելի է ուրիշներին ևս համոզել իւր պէս մտածելու: և ողբերգականն այն, որ դոցանով իւր խղճի հետ հաշտեցնել է կարողանում՝ յետին ծայր թշաւառութեան մէջ ընկածներին հացի գնով հաւատ վաճառելու զարհուրելի իրողութիւնը:

Այս իրողութիւնն է ասհա իսկապէս որ զրաւում է մեր ուշադրութիւնը: Բայց դէպքից օգտուելով՝ կհամենայինք գտնէ այն դրութաւոր փաստի զօրութիւնը փորձել, որով մեր հայ կաթոլիկ եղբայրներն իրենց են համարում ս. Լուսաւորչի հարազատ զաւակներ, և մեզ մերժուած նորա փարախից՝ «մեր բոլոր նախնի Հայրապետաց և պատմագրաց» վերագրելով այն համոզումը, թէ ս. Լուսաւորիչ Հռոմ է գնացել և իւր հօտը պահ տուել ս. Սեղբեստրոս հայրապետին: Երբաւի Ազատանգեղոս այգպիսի մի բան պատմել է և ս. Լուսաւորչի Հռոմ գնալու զբոյցը շատ անգամ յեղեղուել է մեր պատմութեան մէջ. բայց կարող է այն պատմական ճշմարտութիւն լինել:

ինչ վ՛րաբերում է Ազատանգեղոսին՝ պատմագրիս համար պարզ պէտք է լինի, որ նորա պատմութեան այս մասը բոլորովին առասպելախառն է և քաղած ուշ ժամանակի զրոյցներից, որոնք յայտնի առնչութիւն ունին «Սեղբեստրոսի վարք» ի հետ: Վերջինս մի աննշան անձնաւորութիւն լինելով, որի երկարամեայ եպիսկոպոսութիւնից (314-335 թ.) ոչ մի կարեւոր գործ յայտնի չէ ճշգրիտ պատմութեան մէջ՝ անուն է ստացել յետոյ և ընդարձակ առասպելաբանութիւնների առարկայ եղել միայն նորա համար, որ ժամանակակից է առաջին քրիստոնէայ կայսեր՝ Կոստանդինոսի, և Ազատանգեղոս երբ խօսում է նորա կամ Կոստանդինոսի մասին՝ ոչ թէ պատմական Սեղբեստրոսն է այդ, որի անունն իսկ ս. Լուսաւորիչ երեւի չէր լսել իւր կեանքում, այլ հրաշապատում վարքագրութիւնների մէջ փայլող «հայրապետն մեծ արքեպիսկոպոսն աշխարհամուտ զրանն» — և ոչ պատմական Կոստանդինոսը, որ ընդունակ է եղել ծայրահեղ շարագործութիւնների և մահուան անկողնում միայն քրիստոնէութիւնն է ընդունել, այլ նոյն վարքագրութիւնների նկա-

բազրած գաղափարական քրիստոնեայ «երանելի և ցանկալի» թաղաւորը որին «երկնաւոր հրեշտակը» սպասաւորում էր: Թողննք մի կողմի թէ որչափ հնարաւոր բան էր, որ Հայոց թաղաւորը Հռոմ՝ դնար, կաթուղիկոսի, գըլխաւոր եպիսկոպոսների իշխանների և եօթանասուն հազար զօրքի հետ՝ մի մեծանուն կայսեր օրով, որի կենաց մանրամասնութիւններն անգամ մեզ յայտնի են,— և ժամանակակից պատմիչները ոչ մի յիշատակութիւն թողած չլինէին այդ մասին՝ հարց է, երբ տեղի ունեցաւ այդ գէպքը:

Ազաթանգեղոսի նկարագրութիւնից այնպէս է երևում որ այդ միջոցին Կոստանդիանոս յաղթել էր արդէն իւր բոլոր հակառակորդներին և միահեծան տէր դարձել Հռովմէական պետութեան. և յիրաւի քրիստոնէութիւնը կատարեալ կերպով ազատ կրօն դարձաւ այստեղ 324-թ.-ին միայն, երբնա յաղթեց հեթանոսութեան վերջին պաշտպան, պետութեան արեւելեան բաժնի օգոստոս Լիկինոսին և բոլոր իշխանութիւնը իւր ձեռքը ձգեց, ուրեմն Տրդատ և ս. Լուսաւորիչ նորա մօտ գնացած պէտք է լինին 324-325 թ.-ներին (յաղթութիւնից յետոյ և Նիկիոյ ժողովից առաջ), բայց ցաւն այն է, որ այդ ժամանակամիջոցում Կոստանդիանոս շարունակ արեւելքում է եղել և երբէք Հռոմ չէ գնացել: Զամչեան, և նորա հետեւողութեամբ ուրիշները, առանց որևէ պատճառի 319 թ.-ին եղած է համարել նոյն ճանապարհորդութիւնը, իսկ Գաթրձեան* և Տաշեան,** տեսնելով որ անհրաժեշտ է մի պատմական հիմք որոնել՝ գտել են 312թ.-ը երբ Մաքսենտիոս բռնաւորը յաղթուեցաւ Կոստանդիանոսից և սա 313թ.-ին իւր իշխանակից Լիկինոսի հետ Մայլանդի նշանաւոր հրովարտակը հրատարակեց, որով կրօնի ընդհանուր ազատութիւն էր հռչակուում: Այդ թուականները կարող էին ուրեմն յիրաւի Կոստանդիանոսի քրիստոնէութիւն ընդունելու տարին համարուել, և սրամիտէ Գաթրձեանի այն դիտողութիւնը, թէ այդ միջոցներին հայերը պատերազմ էին

ունեցել Մաքսիմինոս Դայա կեսարի դէմ, ուրեմն կարիք կարող էր զգացուել, որ Տրդատ իւր հաւատարմութիւնը ցոյց տար Հռոմի գահոյից առաջ և հաշտութիւն կայացնելու հետամուտ լինէր: Սակայն իրօք Մաքսիմինոս Դայա կենդանի և արեւելքի կեսար մնաց մինչև 313 թ.-ը, ուրեմն 312 թ.-ին գեռ նա էր Տրդատին ամէնից մօտ իշխանաւորը և Հռովմէական տեսակետով Հայաստանը նորա իշխանութեան սահմանների մէջ էր ընկնում: Եթէ ենթադրենք իսկ, որ Տրդատ նորան արհամարհել և աւելի հզօրին զիմեղ կարող էր՝ այդ գէպքում ևս մէջտեղ Լիկինոսը կար, որ իրրև պետութեան արեւելեան բաժնի օգոստոս անուանական իշխանութիւն ունէր Մաքսիմինոսի վերայ, մինչդեռ սորա և Կոստանդիանոսի մէջ ոչ մի կապ չկար: Տրդատ Հռոմ գնալու համար պէտք է ոտքի տակ տար թէ Մաքսիմինոսի և թէ Լիկինոսի իշխանութիւնը, իսկ այդ իւր երկրի համար խաղաղութիւն բերել չէր, այլ սուր. հռովմէական զօրեղ պետութիւնը անտէր ու անկարգ մի երկիր չէր, որ նա իւր 70,000 զօրքով որ կողմն ազննար ճանապարհորդէր ազատութեան գործից, 312 թ.-ին Հռոմում եպիսկոպոս էր ոչ թէ Սեղբեստրոսը (և ոչ իսկ Սեսերիոս ինչպէս ապարդիւն տեղը յարմարեցնել է աշխատել Գաթրձեան), այլ Մելիտապոլէս. իսկ Ազաթանգեղոս անշուշտ սխալմամբ մի անուան տեղ միւսը չէ բերել, այլ նախատակ է ունեցել ս. Լուսաւորիչին հենց վարքագրութիւնների միջոցաւ նշանաւոր դարձած Սեղբեստրոսի հետ յարաբերութեան մէջ գնել: Այսպէս ուրեմն ս. Լուսաւորիչի և Տրդատի Հռոմ գնալուն համար ոչ միայն ոչ մի պատմական կոուտն չկայ, այլ և ընդհակառակն բոլոր փաստերն անհնարին են դարձնում այդպիսի մի ճանապարհորդութիւն: Եթէ մի ստոյգ բան կարող է լինել այստեղ՝ այն է, որ Տրդատի օրով գուցէ մի առանձին նաև յաջորդ դարերի համար նշանակութիւն ունեցող՝ դաշն է հաստատուել Հռովմէական պետութեան հետ, բայց դորա համար հարկաւոր չէր որ Տրդատ մասնաւանդ թէ ս. Լուսաւորիչ՝ Հռոմ գնար, և եթէ դաշնադրութիւնը 324 թ.-ից առաջ է եղել, անշուշտ Լիկինոս նոյնպէս

* Տիեզերական պատմութիւն, հատր ք. Կ. 479.
 ** Ազաթանգեղոս ստ. Գեորգայ ասորի կայ.-ին
 Գր. 145 շ.

մասնակցում էր և զլիսաւ որ դերը նորանն էր իսկ մեր մտանկազրու թեան մէջ միայն կոտանդիանոսի անունն է յիշուում շատ հասկանալի պատճառաւ: Գուղշմիտ և ուրիշներն արդէն այն կարծիքն են յայտնել որ Տրդատի ձանապարհորդութեան գրոյցը փոխ առած պէտք է լինի Ա. դարու Հայոց թագաւոր Տրդատի պատմութիւնից, որի մասին յայտնի է ստոյգ տղրիւրներէց թէ Ներսէի օրով մ. ծ շուքով Հռոմ է գնացել և վառաւոր ընդունելութիւն գտել. անհաւանական չէ ամենեւին որ նոյն իսկ Տրդատ Մեծի դաշնադրութեան մասին Նղիշէի կամ Փաստոսի առած տեղեկութիւնն ևս այստեղից առնուած լինի:

Յամենայն դէպս ընդունել թէ ս. Լուսաւորիչ Հռոմ է գնացել և այն յատկապէս նորա համար որ ս. Պետրոսի յաջորդին իւր խոնարհութիւնը ցոյց տայ իսկական աւետարանի ճշմարտութիւնը սովորէ և խոստանայ իւր հօտը նորան ժառանգութիւն թողնել նորան հնազանդելը ճշմարտ քրիստոնէսից և լուսաւորչական համարուելու անհրաժեշտ պայման գնելով—կարող են, կրկնում ենք, նոքա միայն, որոնց համար պատմութիւն չկայ այլ ամէն ինչ նոյն առանցքի՝ «Պետրոսի յաջորդ»: Աստուծոյ փոխանորդ պտղի շուրջն է գտնուում Սեղբեստրոս հայրապետի օրով ոչ նորա և ոչ ուրիշներին մտքով կանցնէր երբէք թէ ամբողջ քրիստոնէայ աշխարհը նորան պէտք է հպատակէ. այդ ժամանակ դեռ նոյն իսկ Ոտալիոյ մեծ քաղաքների ինչպէս Մայլանդի, կամ արեւմտեան քրիստոնէութեան մեծ կեդրոնների, ինչպէս կարքեղոնի՝ եպիսկոպոսներն իրենց Հռոմի եպիսկոպոսի իշխանութիւնից բոլորովին անկախ և նորան հաւաստարարօր առաքելական յաջորդներ էին համարում ուր մնաց թէ հեռաւոր արեւելքում իւր սեփական թագաւորութիւնն ու կարգերն ունեցող նորադարձ քրիստոնէայ ժողովուրդի հովուապետը—Թաշակրաց արշաւանքների պէս մի ահագին շարժում պէտք էր որ շփում յառաջ բերէր արեւելքի ու արեւմուտքի մէջ և պատճառ տար հայերին Հռոմի գերագահութեան խնդրով զբաղուելու. դորանից առաջ Հայոց և Հռո-

մէական եկեղեցիների մէջ որ և է լուրջ յարարելութիւն երբէք չի եղել և չի եղել չէր կարող:

Թէ Պետրոսի զլիսաւորութիւնը և մեր եկեղեցւոյ երջանիկ հայրապետների կաթնօրիկութիւնն ապացուցանելու համար բերուած փաստերը որչափ կշիռ ունին՝ այդ մասին ուրիշ անգամ ևս խօսել ենք. մենք ոչինչ չունինք ի հարկէ հակառակ, եթէ մեր կաթնօրիկ հայ եղբայրները կամենում են այսպիսի յերիւրանքներով իրենց սրտերը մտիթարել և լատինականութեան գրկում խաղաղ շնորհուելու համար հոգեւոր կապ պահպանել ս. Լուսաւորչի և նորա արժանաւոր ժառանգների հետ. բայց եթէ այդ յերիւրանքները վկայութիւններ պէտք է լինին որ մեզ համոզեն թէ մեր եկեղեցին ս. Լուսաւորչի եկեղեցին չէ՝ ճշմարտ եկեղեցին և մենք հոգւոյ փրկութիւն ձեռք բերելու համար անպատճառ երկրպագութիւն պէտք է տանք Հռոմում ոսկէ սնդուկների վերայ պատկած ողորմելի ծերունուն, իբրև Աստուծոյ փոխանորդի՝ բաւական ենք համարում յիշել միայն մարգարէի բերանով առած ճշմարտ Աստուծոյ մի խօսքը որ բիրաւոր այդպիսի վկայութիւններ կկռէ. Անիճեակ լիցի մարդ որ արացել դոյս իւր ի մարդ: Մեր պաշտօնակից քաջարի վարդապետները շատ լաւ գիտեն ի հարկէ թէ ս. Գրքի և պատմութեան վկայութիւններով չէ որ համոզում են վանեցի սովատանջ հայ եղբայրներին Ս. Պետրոսի փարախի մէջ փրկութիւն որոնել, այլ փայլուն արծաթի գնով, բայց թող չմոռանան թէ ինչ ասաց նոյն ինքն Պետրոս առաքեալը, երբ նորան առաջարկեցին հոգեւոր շնորհները վաճառել. Արծաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ, զի զպարզեան Աստուծոյ համարեցար ընչիւք ստանալ: ** Թող չմոռանան նաև Հռոմի միւս առաքեալը՝ հրաշարան ս. Պօղոսի խօսքը. միայն Գաղատացիներին չէ տես նա, այլ նաև այն բոլոր հայերին, որոնք կենթադրեն: Թէ իրենց պանծալի նախնեաց քարոզուած և անթիւ նահատակների արխնով հաստատութիւն գտած աւետարանը ճիշտը

* երևնա ժե. 5 ** Գործ. Բ. 20.

չէ, այլ կաթովիկ պաաներն երի մօտ պէտք է գնալ ձիշոր գտնելու համար*։ Զարմանամ գի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ որ կոչեսց զձեզ ի շնորհան Բրիտանիոյ յայլ աւետարան, որ ոչ գոյ այլ ըստ բթէ իցին ոմանք, որ խռովեցուցանիցին զձեզ և կամօցին շրջել զաւետարանն Բրիտանիոյ Այլ եթէ միք, կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ նդովնալ լիցի Որպէս յառաջագոյն ասացաք և արդ դարձեալ ասեմք. եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր սոսէքն՝ նդովնալ լիցի»։



ՅՈՒՆԱԿԱՆ ՎԱՆԿԱՆՈՒԹԻՒՆՆԸ**

Զի կարելի ասել որ Յունական վանականութիւնը եկեղեցական պատմիչների (քաղաքական պատմիչների մասին բողոքովին լուսւմ ենք) առանձնապէս սիրալիր ուշադրութեան առարկայ եղած լինի։ Աշխատել են միայն (վանականութեան պատմութիւնը սկսելով Ապագոսի կիտի Անսարիոյ եպիսկոպոս ս. Բարսեղից † 379) աստուածարանական վէճերի առթիւ նրա ցոյց տուած գործունէութիւնը բնորոշել, իսկ այլ գեպերում հանգիստ են թողել աշխարհահորոյս իրենց հանգստութիւնը որոնող միայնակեացներին։ Ապիտ մոլեռանդութիւնը և անիրական երազները համարում են այս գասակարգի բնորոշ գծեր։ Մենք չենք ուզում անցեալի մէջ ընկղմուել, միջնադարեան կրօն կարգերի քաղաքակրթական դերը ցոյց տալու համար որպէս զի ամէնքը տեսնեն և համոզուին, թէ վանականութիւնը աշխարհում ի՞նչ ազդեցութիւն ունենալ կարող է՝ բաւական է այսօր ևս մեր առաջ եղող կաթովիկ եկեղեցու պատկերը։

Եթէ մէկը կշռադատէ, թէ ի՞նչ նշանակութիւն ունի վանականութիւնն այնտեղ, թէ ինչպէս նա քահանայի և աշխարհականի մէջ եղած սուր

հակադրութիւնը մեղմացնում է, ինքնուրոյն կրօնական ձգտման ապաստանարան գտնուում ինչպէ եկեղեցու պաշտօնական մարմինների վրայ լուկեայ վերահսկողութիւն է գործ դնում և զարմանալ հաւասարակշռութեամբ պահպանում բարձրագոյն իշխանութիւնը՝ իբր պահանջ յենարան. եթէ ինչպատի ունենայ, թէ որպիսի եռանդով նուիրուում է նա եկեղեցու մէջ ներքին և արտաքին առաքելութեան նկատմամբ յարուցուած մեծամեծ խնդիրներին, թէ ինչպէս ժողովուրդի մէջ զարթեցնել զիս ընդհանուր շահերի միտքը և մի մեծ ամբողջութեան պատկանելու հպարտ գիտակցութիւնը. — եթէ մէկ այս ամէնը միաժամանակ պատկերացնէ՝ կտեսնէ որ վանականութիւնը այս հմտակազմ եկեղեցական — քաղաքական դրութեան մէջ ամենաիրական գործունէներից մէկն է և որ կաթովիկութիւնը իւր յաղողութիւնների մեծագոյն մասը նրան է պարտական։ Այդպիսի բազմակողմանի գործունէութիւն քաղաքակրթութեան և եկեղեցական քաղաքականութեան ասպարէզում յունական վանականութիւնը ցոյց չի տուել։ Բայց վանականութեան արժէքը սրանով չափելով արգեօք մենք սխալ գծաչափ գործ դրած չենք լինում։

Վանականութիւնն ըստ ինքեան արդիւնք է զուտ կրօնական շարժման. պէտք է արգեօք նորա նշանակութիւնը աշխարհային քաղաքակրթութեան և եկեղեցական վարչութեան համար կատարած գործերով գնահատել։ Տենց այս պատճառով, այսպիսի նպատակների ծառայելով չէ՞ր որ վանականութիւնը կորցրեց արեւմուտքում իւր ոյժերը, և ազիւ գաղափարները ճնշուեցան, յիշեցէք միայն թէ ինչպէս Հռոմէական եկեղեցու մէջ իւրաքանչիւր կարգ կարճ ժամանակի երիտասարդական թարմ ողևորութիւնից յետոյ, անդարձ կերպով աշխարհականացնում է, թէ ինչպէս այս ազդեցութեան տակ՝ միշտ նոր ողևորութեամբ նոր հաստատութիւններ են հիմնուում որոնք բոլորն ևս նոյն օրէնքին են ենթարկուում։ Բաւական է միայն մտաբերել ս. Ֆրանչիսկոսին և նորա կարգի հիմնադրութեան պատմութիւնը, եթէ արդարութեամբ դատուի և վանականութեան ծառայութիւնները այնտեղ վնասուին, ուր որ նորա իսկապէս առաջին տեղը պիտի բռնէին, այսինքն՝ ներքին հոգեկան կեանքի մէջ, այն ժամանակ պիտի երևայ, որ Յունական եկեղեցին ևս իրաւունք ունի իւր վանականութեամբ հպարտանալու, որ արևելեանների գէմ յարուցած կշտամբանքները ձանձրալի կրկնութիւններ են միևնոյն առարկութեանց, և որ աւելի կարևոր կլինէր անաշառ քննադատութեամբ նրանց բարի կողմերը երևան հանել։

Ի՞նչ էր այն գաղափարը, որ վանականութիւնը Տենց սկզբից իրագործել էր ուզում։ Ամենահին վարքագրութիւնը՝ Աթանասի՝ գրած Անտոնիո-

* Կաղ. Ա. 5—9

** Բարգմ. Ueber das Griechische Mönchtum sksru-կից, ու urssauցուած Preussische Jahrbücher նշանաւոր ամսաթերթից, ևս հնդիմակն Կարլ Հոյը՝ յունաց եկեղեցույ վերաբերեալ մի ֆակի յուրչ ուսումնասիրութիւններով յայտնի երիտասարդ գիտնականը։